ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 9-Լ

«31» 01 2023 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԼՐԻՎ ՄԱՇՎԱԾ (ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ) ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման համար անհրաժեշտ աշխատանքները կազմակերպելու նպատակով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31-ի «Պետական կառավարչական հիմնարկների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման կարգը հաստատելու մասին» թիվ 787-Ն հրամանով հաստատված կարգի 6-րդ կետը և 2016 թվականի հունվարի 8-ի «Հանրային հատվածի կազմակերպություններում նոր հիմնական միջոցների և սկզբնական արժեքով հաշվառվող կենսաբանական ակտիվների մաշվածության հաշվարկման նորմատիվային օգտակար ծառայության ժամկետները սահմանելու մասին» թիվ 3-Ն հրամանը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ **Հ. Մարտիրոսյան,**

Հանձնաժողովի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետ **Ռ. Առաքելյան**,

Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ **Ա. Սարգսյան**,

Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի մասնագետ **Հ. Շոխոյան**,

Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ հաշվապահ **Ա. Գաբրիելյան**,

Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգչային ցանցի առաջատար ադմինիստրատոր **Զ. Սարգսյան**,

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության տնտեսական բաժնի պետ **Ռ. Արշակյան** (համաձայնությամբ):

2. Հանձնաժողովի նախագահին՝ կազմակերպել և ապահովել Հայաստանի Հանրապետության դատախազության լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման գործընթացը և համապատասխան ակտը մինչև սույն թվականի մարտի 1-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին:

3. Սույն հրամանի վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարը:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ